ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռուսաստանեան Ֆեդերացիայի պրեզիդենտ Բ.Ն.Ելցինի եւ Ղազախստանի պրեզիդենտ Ն.Ա.Նազարբայեւի միջնորդական առաքելութեան արդիւնքների մասին

Չորրորդ տարին է չի հանդարտւում տարբեր ազգութիւնների բազմաթիւ մարդկանց կեանքը խլած սուր բախումը Լեռնային Ղարաբաղի շրջանում: Ջոհւում են խաղաղ բնակիչներ, զոհւում են բանակի եւ ներքին զօրքերի զինծառայողներ: ԽՍՀՄ կենտրոնական մարմինները անընդունակ գտնուեցին շրջանում իրավիճակը նորմալացնելու, արդիւնաւէտ միջոցառումներ մշակելու եւ իրականացնելու գործում: Թոյլ են տրուել կոպիտ սխալներ, որոնք իրենց յետեւից բերեցին բախուող կողմերի սրուած հակամարտութիւն եւ անվստահութեան աճ միութենական մարմինների նկատմամբ:

Ստեղծուած իրավիճակում միջնորդական ջանքերի անհրաժեշտութիւն առաջացաւ, որոնց նպատակն է՝ պայմաններ ստեղծել շրջանում իրավիճակը նորմալացնելու հիմքերը քայլ առ քայլ դնող բանակցութիւնների գործընթացի սկզբի համար: Ադրբեջանական եւ հայկական կողմերի համաձայնութեամբ միջնորդի դերն իրենց վրայ վերցրեցին Ռուսաստանեան Ֆեդերացիայի եւ Ղազախստանի ղեկավարները:

1991 թուականի Սեպտեմբերի 23ին Ռուսաստանեան Ֆեդերացիայի պրեզիդենտ Բ.Ն.Ելցինի եւ Ղազախստանի պրեզիդենտ Ն.Ա.Նազարբայեւի գլխաւորած միջնորդական առաքելութիւնը եղաւ Բաքւում, Գեանջայում, Ստեփանակերտում եւ Երեւանում: Կողմերը բախումը լուծելու համար ղեկավարւում են ինքնիշխան պետութիւնների ներքին գործերին չմիջամտելու, միջազգային իրաւունքի նորմերին համապատասխան, բոլոր քաղաքացիների, անկախ նրանց ազգութիւնից, իրաւունքների պարտադիր պահպանման սկզբունքներով:

Միջնորդական ջանքերի ընթացքում քննարկուեցին բախումը փուլ առ փուլ կարգաւորելու որոշ հարցեր:

Քննարկման հիմնական արդիւնքները կայանում են հետեւեալում.

1. Կողմերն համարում են, որ մինչեւ 1992թ. Յունուարի 1ը բախումը կարգաւորելու անհրաժեշտ եւ պարտադիր պայմաններ են՝ կրակի դադարեցումը, ԼՂԻՄի մասին Ադրբեջանի եւ Հայաստանի բոլոր ոչ-սահմանադրական ակտերի չեղեալ յայտարարումը, իշխանութեան օրինական մարմինների լիազօրութիւնների ճանաչումը, բախման գօտուց զինուած բոլոր կազմաւորումների դուրսբերումը, բացառութեամբ ԽՍՀՄ ՆԳՆ եւ ԽՍՀՄ Պաշտպանութեան Նախարարութեան ներքին զօրքերի զօրամասերի: Այդ ժամկէտն անցնելուց յետոյ զինուած բոլոր կազմաւորումների ներկայութիւնն ու նրանց գործողութիւնները կողմերի կողմից կը համարուեն անօրինական եւ կը կասեցուեն ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զօրքերի կողմից, իսկ զինուած կազմաւորումների մասնակիցները կենթարկուեն օրէնքով հաստատուած պատասխանատուութեան:

Ցանձնարարել դիտորդների աշխատանքային խմբին մշակել միջոցառումներ կրակը դադարեցնելու, նրա կողմից անօրինական համարուած, բոլոր զինուած կազմաւորումները չեզոքացնելու, բախման գօտում ապրող բոլոր քաղաքացիների անվտանգութեան երաշխիքները ստեղծելու միջոցառումներ:

2. Բախման գօտում դրութիւնը նորմալացնելու համար համաձայնեցուած գործողութիւններ իրագործելու նպատակներով ստեղծւում է դիտորդների ժամանակաւոր աշխատանքային խումբ, որի մէջ մտնում են Ռուսաստանեան Ֆեդերացիայի եւ Ղազախստանի լիազօր ներկայացուցիչները: Աշխատանքային խումբն իր գործունէութիւնը սկսում է Հոկտեմբերի 1ից:

3. Ադրբեջանական Հանրապետութիւնն ու Հայաստանի Հանրապետութիւնը փուլ առ փուլ, սկսելով դատարկ զիտերից, ապահովում են բռնազաղթեցուած ազգաբնակչութեան վերադարձը: Կողմերը երաշխաւորում են նրա անվտանգութիւնը բնակութեան մշտական վայրերում: Այդ հարցի շուրջ բանակցութիւններ սկսել 1991թ. Հոկտեմբերի 1ից:

4. Բախման մէջ ներքաշուած կողմերը անյապաղ ձեռնամուխ են լինում պատանդների ազատմանը: Այդ գործընթացը պէտք է աւարտուի երկշաբաթեայ ժամկէտում, որն անցնելուց յետոյ, անձինք, ովքեր մասնակից են պատանդներ պահելուն, կենթարկուեն պատասխանատուութեան օրէնքին համապատասխան :

Այս կէտի կատարման վերահսկողութիւնը իրականացնում են կողմերի-միջնորդների լիազօրուած ներկայացուցիչները:

5. Կողմերը միութենական մարմինների հետ համատեղ երկշաբաթեայ ժամկէտում ապահովում են երկաթուղային տրանսպորտի, օդային հաղորդակցութեան, կապի եւ հաղորդակցութեան միջոցների նորմալ կենսագործունէութիւնը:

Կողմերը միջնորդների մասնակցութեամբ ձեռնամուխ են լինում աւտոմոբիլային ճանապարհների ազատ եւ փոխշահաւէտ գործառնութիւնն ապահովող բանակցութիւնների:

6. Քննարկման ընթացքում կողմերն յանձնեցին միասնական կարծիքի՝ բախման գօտուց ստացուող ինֆորմացիայի օբիեկտիւութեան ապահովման անհրաժեշտութեան մասին: Որոշուած է ստեղծել ինֆորմացիոն խումբ՝ կազմուած Ռուսաստանեան Ֆեդերացիայի եւ Ղազախստանի ներկայացուցիչներից՝ լիազօրուած իրականացնելու բախման գօտու իրադարձութիւնների շուրջ պաշտօնական ինֆորմացիայի պատրաստումը:

7. Ադրբեջանական Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան բարձրագոյն մարմինները հաստատում են լիազօր պատգամաւորութիւններ, որոնք անյապաղ ձեռնամուխ կը լինեն մշտական հիման վրայ երկկողմանի բանակցութիւնների գործընթացի:

8. Կողմերն համարում են, որ բանակցութիւնների սկսուող գործընթացին կը նպաստի մօտ ժամանակներս Ռուսաստանեան Ֆեդերացիայի եւ Ադրբեջանական Հանրապետութեան, Ռուսաստանեան Ֆեդերացիայի եւ Հայաստանի Հանրապետութեան, Ղազախական ԽՍՀի եւ Ադրբեջանական Հանրապետութեան, Ղազախական ԽՍՀի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ երկկողմանի պայմանագրերի նախապատրաստումն ու կնքումը:

9. Դիտորդների աշխատանքային խմբին յանձնարարուած է մէկամսեայ ժամկէտում նախապատրաստել առաջարկութիւններ բախման կարգաւորման հետագայ փուլերի մասին:

10. Դիտորդների աշխատանքային խմբին՝ պարբերաբար տեղեկացնել չորս հանրապետութիւնների ղեկավարներին սոյն հաղորդագրութեամբ նախատեսուած միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

Սոյն հաղորդագրութիւնում բովանդակուող դրոյթները չեն կարող դիտուել որպէս ինքնիշխան պետութիւնների՝ Ադրբեջանական Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան ներքին գործերին միջնորդների միջամտելու իրաւունք:

Հաղորդագրութիւնը ստորագրեցին.

ՌԽՖՍՀի կողմից
Բ.Ն.Ելցին

Ղազ. ԽՍՀի կողմից
Ն.Ա.Նազարբայեւ

Ադրբեջանի Հանրապետութեան կողմից
Ա.Ն.Մութալիբով

Հայաստանի Հանրապետութեան կողմից
Լ.Յ.Տեր Պետրոսեան

23 Սեպտեմբերի, 1991 թիւ

Բ. Ժելեզնովոդսկ